Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:


*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝*[http://www.armin.am](http://www.armin.am)

*Էլ. փոստ՝*[info@armin.am](mailto:info@armin.am)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ռ.Կ. ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ

# ԲԱՌԱԳՐՔՈՒՅԿ

*Նոր և նորակազմ բառեր հայերենում*

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 809.198.1:801.316.1
ԳՄԴ 81.2Հ-4
Ս 294

*Հրատարկության է երաշխավորել ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի խորհուրդը*

*Խմբագիր՝ պրոֆ. Յ. Ավետիսյան*

Սաքապետոյան Ռ.Կ.
Ս 294 Բառգրքույկ, Նոր և նորակազմ բառեր հայերենում/ Ռ. Սաքապետոյան; -Եր.:ԵՊՀ հրատ., 2014 – 80 էջ:

Ներկայացվող բառգրքույկը ընդգրկում է նորահայտ և քիչ հայտնի բառեր հայերենում, որոնք ստեղծվել են վերջին շրջանում օտար բառերի փոխարեն. դրանք հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմել հայերենի բառապաշարային տեղաշարժերի մասին և միաժամանակ շրջանառության մեջ դնել մի շարք նորակազմ հայերեն բառեր:

Բառգրքույկը օգտակար կարող է լինել ուսուցիչների, լրագրողների, ուսանողների և առհասարակ հայերենի հարցերով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 809.198.1:801.316.1
ԳՄԴ 81.2Հ-4

ISBN 978-5-8084-1849-3

© ԵՊՀ հրատարակչություն, 2014
© Սաքապետոյան Ռ.Կ., 2014

# ԱՌԱՋԱԲԱՆ

Նորակազմ բառերի հարցը միշտ էլ եղել է վիճահարույց և առիթ է տվել բուռն վեճերի, որոնք այսօր էլ երբեմն-երբեմն բռնկվում և մարում են զանգվածային լրատվամիջոցներում: Ընդ որում, իշխում են տրամագծորեն հակադիր մոտեցումներն ու կարծիքները. կամ փնովում և հողին են հավասարեցվում առհասարակ նորակազմությունները և կամ էլ խրախուսվում են իրոք անբարեհունչ և անհեթեթ բառերը: Մեծ մասամբ գերակշռում են անհատական-սուբյեկտիվ մոտեցումները, որոնք հիմնվում են սեփական ճաշակի ու ըմբռնումների վրա: Ծայրահեղություններից չեն խուսափել նույնիսկ մեր այն մեծերը, որոնց ավանդը մայրենի լեզվի մշակման ու զարգացման մեջ անգնահատելի է: Նորաբանությունների հակառակորդներին հիշեցնենք այս հարցերի վերաբերյալ Թումանյանի ու Տերյանի տեսակետները, որոնք չդիմացան ժամանակի քննությանը…

Լեզուն ինքն է ընտրում իր զարգացման բնական ուղին, և ոչ մի ժխտողական կամ ներբողական վերաբերմունք չի կարող փոխել իրերի բնական ընթացքը, ինչպես որ չկարողացան նրա վրա ազդել 40-ական թվականներին մեր լեզվին «ստալինյան ուկազով» սոսնձված «**ռեսպուբլիկան** ու **պարտիան**, **կոնստիտուցիան** ու **ռևոլյուցիան**»…

Ամենից առաջ նշենք, որ նորաբանություններ կոչվող այս բառախմբի մի մասը համարյա թե արտացոլված չէ հրապարակի վրա եղած բառարաններում, ավելի ճիշտ՝ այս բառաշարքը պատշաճ ձևով առանձնացված չէ հայերենի ընդհանուր բառային կազմում: Դրանց մի մասը տեղ է գտել մեր «Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական - բացատրական բառարանում» (Ե. 2000), ապա առավել լրամշակված «Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարանում» (Ե. 2011), որտեղ դրանք հանդես չեն գալիս որպես **գլխաբառեր**, այլ տրվում են այդ բառերի հայերեն տարբերակների վերջում՝ ցույց տալու համար, թե մինչև այդ հայերեն նորաբանության գործա-

ծությունը որ օտարաբան ձևն էր մեզանում տարածված, ինչպես, օրինակ՝ **հանրագիտարան** բառի բացատրության վերջում բերվում է նաև **էնցիկլոպեդիա** ձևը, որը մեզանում գործածվում էր մինչև 60-70-ական թվականները: Այս բառգրքույկում բոլոր օտարաբան ձևերը տրվում են իբրև գլխաբառեր: Դա հնարավորություն է տալիս ի մի բերել բոլոր այն բառերը, որոնց օտար ձևերի փոխարեն այսօր գործածվում են դրանց հայեցի ձևերը: Սա միաժամանակ օգնում է ընդհանրացնելու լեզվի մեջ կատարվող բառապաշարային տեղաշարժերը, ցույց տալու լեզվի զարգացման միտումները և, ամենակարևորը, ընթերցողի ձեռքը տալու մի համառոտ ու գործնական ուղեցույց, որտեղ արձանագրված են նոր և նորագույն բառեր՝ հաճախ առաջին անգամ շրջանառության մեջ դրվող: Դրանց մի զգալի մասը գալիս է արևմտահայերենից, քիչ չեն նաև արևելահայ իրականության մեջ ստեղծվածները: Երբեմն տրվում են մի քանի հոմանիշներ՝ ընթերցողին թողնելով դրանցից որևէ մեկին նախապատ-

վություն տալու հարցը: Հայերեն նորակազմությունների հետ տրվում են նաև ռուսերեն և անգլերեն համարժեքները (անգլերենի գծով խորհրդատու՝ Կարապետ Սաքապետոյան):

Քանի որ բառգրքույկը առաջին հերթին նախատեսված է լայն հանրության համար, ուստի բառերի բացատրություններում տրվում են դրանց **հանրագիտական** և ոչ **նեղ մասնագիտական** իմաստները:

Բառգրքույկում տեղ գտած ոչ բոլոր բառերն են, որ արժանացել են բառգրքույկի հեղինակի դրական գնահատականին, ոչ բոլորն են, որ վստահաբար արժանանալու են մասնագետների ու հանրության հավանությանը: Հեղինակը, նման «վիճահարույց» բառերը ներմուծելով բառգրքույկի մեջ, փորձում է դրանք ներկայացնել համընդհանուր ուշադրության, այսպես ասած՝ «փորձաքննության», քանի որ ամենից ճիշտ և արդար դատավորը Նորին մեծություն **Ժամանակն** է:

## Համառոտագրությունների ցանկ

Ախտ.--------- Ախտաբանական

Ած. ------------ Ածական

Արաբ.  ------- Արաբերեն

Արվ. ---------- Արվեստ

Բժշկ.  -------- Բժշկական

Գերմ.  -------- Գերմաներեն

Երժշտ. ------ Երաժշտական

Երկրչ. ------- Երկրաչափական

Թատ. -------- Թատրոն

Իրավ.  ------- Իրավաբանական

Լեզվ. --------- Լեզվաբանական

Կենդ.  -------- Կենդանաբանական

Կենս.  -------- Կենսաբանական

Կզմխս. ------ Կազմախոսական

Մաթ.  -------- Մաթեմատիկական

Մարզ.--------  Մարզական

Շին.  ---------- Շինարարական

Ոճաբ.  ------- Ոճաբանական

Պատմ.  ------ Պատմական

Ռազմ. ------- Ռազմական
Տեխն. -------- Տեխնիկական
Տնտես. ------ Տնտեսագիտական
Փիլ. ----------- Փիլիսոփայական
Քիմ. ---------- Քիմիական
Ֆիզ. ---------- Ֆիզիկա
Ֆր. ------------ Ֆրանսիական

# Ա

***Աբստրակցիոնիզմ*** – գ. **Վերացապաշտություն**, абстракционизм, abstractionism.

***Աբստրակցիոնիստ*** – ած.գ. **Վերացապաշտ**, абстракционист, abstractionist.

***Ագնոստիցիզմ*** – գ. *(փիլ.)* Աշխարհի ճանաչելիությունը մերժող ուսմունք՝ **Պատճառագիտություն**, агностицизм, agnosticism.

***Ագրեսիվ*** – ած.գ. **Հարձակունակ**, агрессивный, aggressive.

***Ագրեսիվություն*** – գ. **Նախահարձակունակություն**, агрессивность, aggressiveness.

***Ագրեսոր*** – ած.գ. Միջազգային իրավունքի տեսանկյունից՝ այլ երկրների նկատմամբ ռազմական նախահարձակում իրականացնող՝ սպառնալով նրա ինքնիշխանությանը՝ **Հարձակապաշտ**, агрессор, aggressor.

***Ադապտացիա*** – գ. Կենդանի էակների հարմարվելը շրջապատող միջավայրին՝ **Հարմարակում**, адаптация, adaptation.

***Աթերոսկլերոզ*** – գ. *(ախտ.)* Երակների պատերի կարծրացում և անցքի նեղացում՝ **Պնդերակու-թյուն**, атеросклероз, atherosclerosis.

***Ալերգիա*** – գ. *(ախտ.)* Գերզգայնության կամ այլ պատճառներով առաջացած հիվանդություն՝ **Հատ-կախտ**, аллергия, allergy.

***Ալիբի*** – գ. *(իրավ.)* **Այլուրեքություն**, **այլուրու-թյուն, այլուրկա**, алиби, alibi.

***Ալտրուիզմ*** – գ. Ուրիշների մասին անշահախնդրո-րեն հոգալը՝ **Այլասիրություն,** альтруизм, altruism.

***Ալտրուիստ*** – գ. Ուրիշներին անշահախնդրորեն սիրող՝ հոգացող՝ **Այլասեր,** альтруист, altruist.

***Ալտրուիստական*** –ած. **Այլասիրական, Անանձնա-կան, Այլանձնական**, альтруистический, altruistic.

***Ակադեմիա*** – գ. **Կաճառ**, академия,academy.

***Ակադեմական*** –ած. գ. **Կաճառորդ**, **Կաճառա-կան**, 1. Академический, 2. Академик, academic.

***Ակորդ*** – գ. *(երժշտ.)* Երեքից ոչ պակաս տարբեր բարձրության ձայների միաժամանակյա համա-դրություն, որոնք լսողությամբ ընկալվում են իբրև ձայնային միասնություն՝ **Դաշնուրդ,** аккорд, accord.

***Ակորդեոն*** – գ. **Ձեռնադաշնակ**, аккордеон, accordion.

***Ակրոստիքոս*** – գ. Ոտանավորի սկզբնատառերով կազմվող անուն՝ **Ծայրանուն**, акростих, akrostikos.

***Ակցիա*** – գ. *(տնտես.)* **Բաժնետոմս**, **Բաժնեթուղթ**, акция, share.

***Ակցիոներ*** – գ. *(տնտես.)* **Մասնակից**, **Շահընկեր**, **Արժեթղթերի սեփականատեր**՝ **Բաժնետեր**, **Բաժնեկից**, акционер, shareholder.

***Ակումուլյատոր*** – գ. *(տեխն.)* **Կուտակիչ**, **Ուժահավաք**, аккумулятор, battery, accumulator.

***Ամպլուա*** – գ. *(թատ.)* Դերասանի ներաշխարհին և կարողություններին պատշաճող դեր՝ **Հատկադեր**, амплуа, line.

***Անագրամ*** – գ. Բառախաղի տեսակ, որ կազմվում է բառերի կամ տառերի փոխատեղումով՝ **Անդրատառություն**, анаграмма, anagram.

***Անալոգիա*** – գ. *(փիլ., լեզվ.)* Առարկաների, երևույթների և հասկացությունների միջև ընդհանրություն՝ ըստ որոշակի հատկանիշի՝ **Համաբանություն**, аналогия, analogy.

***Անատոմիա*** – գ. *(ախտ.)* **Կազմախոսություն**, **Կազմաբանություն**, анатомия, anatomy.

***Անատոմիական*** – գ. *(ախտ.)* **Կազմախոսական**, **Կազմաբանական**, анатомический, anatomical.

***Անատոմիստ*** – գ. (ախտ.) Մարմնամասերն ուսումնասիրող մասնագետ՝ **Կազմախոս, Կազմաբան,** анатомист, anatomist.

***Անարխիստ*** – գ. Օրինական իշխանության դեմ գործող՝ **Անիշխանական,** анархист, anarchist.

***Անարխիզմ*** – գ. **Անիշխանականություն**, анархизм, anarchism.

***Անաֆոր*** – գ. *(ոճար.)* Ճարտասանական հնարանք՝ կազմված բառի կամ արտահայտության տարաձև կրկնություններով՝ **Հարակրկնություն**, анафора, anaphora.

***Անեմոգրաֆ*** – գ. Քամու արագությունն ու ուղղությունը արձանագրող սարք՝ **Հողմագիր**, анемограф, anemograph.

***Անեկդոտ*** – գ. 1. Պատահար, միջադեպ: 2. Ծիծաղաշարժ կարճ պատմություն: 3. **Մանրադեպ**, анекдот, anecdote.

***Անսամբլ*** – գ. **Համույթ**, ансамбль, band, ensemble.

***Անտեննա*** – գ. 1. **Ալեհավաք**, принимающая антенна, 2. **Ալեցիր,** передающая антенна, antenna.

***Անտիցիպացիա*** – գ. *(լեզվ.)* Բառի մեջ հնչյունի կրկնությունը իր տեղում արտասանվելուց հետո հնչյունի հավելում՝ **Հարասում, Հարասություն** (օր.՝ կանանչ, ճանանչել), антиципация, anticipation.

***Անտրոպոմորֆիզմ*** – գ. *(փիլ.)* **Մարդակերպություն, Մարդանմանություն, Մարդեղություն**, антропоморфизм, anthropomorphism.

***Աորտա*** – գ. *(կզմխս.)* Սրտից դուրս եկող մայր երակ՝ **Բներակ՝ Սրտափող**, аорта, aorta.

***Ապենդիցիտ*** – գ.*(ախտ.)* Որդանման ելունի բորբոքում՝ **Կուրաղետապ**, аппендицит, appendicitis.

***Ապրիորի*** – ած. մ. *(փիլ.)* Փորձից անկախ՝ **Հառաջագունե, Անդրանցական, Վերանցական:** априори, a priori */լատ./*, a priori

***Ասթմա*** – գ. *(ախտ.)* Շնչելու դժվարություն՝ **Շնչարգելություն, Դժվարաշնչություն**, **Հեղձուկ**, астма, asthma.

***Ասիստենտ*** – գ. Գլխավոր գործողի մոտ օգնական՝ **Առընթերակա**, ассистент, assistant.

***Ավանգարդ*** – ած.գ. 1. Առաջին գծի վրա գտնվող: գ. 2. *(ռազմ.)* Ռազմական միավորում, որ գնում է առջևից և հետախույզի դեր է կատարում՝ **Առաջապահ**, авангард, avanguard.

***Ավանգարդիստ*** – *(արվ.)* Ուղղություն արվեստում և գրականության մեջ՝ **Հառաջապահ**, авангардист, avant-gardist.

***Ավտոբուս*** – գ. **Հանրակառք,** автобус, bus.

***Ավտոմատ***[1] – Ինքնիրեն աշխատող՝ **Ինքնեկ,** автомат, automatic.

***Ավտոմատ***[2] – գ. Զենքի տեսակ՝ **Ինքնաձիգ, Արագահարված**, автомат, machine gun.

***Ավտոմոբիլ*** – գ. **Ինքնաշարժ**, автомобиль, car.

***Ատոմ*** – գ. **Հյուլե, Կորիզ, Միջուկ,** атом, atom.

***Ատոմային*** – ած. **Ատոմական, Հյուլեական, Կորիզային**, атомный, atomic.

***Ատրոֆիա*** – գ. Սննդի պակասությունից մարմնի հյուծվելը՝ մաշվելը, նիհարելը՝ **Ծյուրանք**, атрофия, atrophy.

***Արթրիտ*** – գ.*(ախտ.)* Հոդերի բորբոքային հիվանդություն՝ նյութափոխանակության խախտման

հետևանքով՝ **Հոդաբորբ, Հոդատապ, Հոդագարություն**, артрит, arthritis.

***Արիերգարդ*** – գ. *(ռազմ.)* Զորաշարժի մեջ գտնվող բանակի ետևից գնացող և նրա թիկունքը պաշտպանող զորամիավորում՝ **Վերջապահ,** арьергард, arearguard.

***Արիստոկրատիա*** – գ. **Ազնվապետություն**, аристократия, aristocracy.

***Աուդիենցիա*** – գ. Ունկնդրություն բարձրաստիճան անձի մոտ՝ **Լսուրդ,** аудиенция, audience.

***Աուդիո–վիդեո*** – ած. Լսելու և դիտելու՝ **Լսատեսողական**, аудио-видео, audio-video.

***Աուդիտ*** – գ. *(տնտեւ.)* Կրկին քննելը՝ ստուգելը՝ **Վերաքննություն**, **Հաշվեստուգում,** аудит, audit.

## Բ

***Բազա*** – գ. 1. **Պատվանդան: 2. Նեցուկ, հենարան: 3. Ռազմական հենարան՝ Խարիսխ**, база, 1. Pedestal, 2. support, 3. military base.

***Բազալտ*** – **գ. Սևակուճ: базальт, basalt**

***Բազային*** – ած. **Հենարանային՝ Խարխային**, базовый, basic.

***Բալ***[1] – գ. Երկրակեղևի ցնցումների ուժգնության չափման միավոր՝ **Ուժաստիճան**, балл, point

***Բալ***[2] – գ. *(մարզ.)* **Նիշ, միավոր**: балл, point.

***Բանան*** – գ. **Աղամաթուզ,** банан, banana.

***Բանկ*** – գ. **Դրամատուն,** банк, bank.

***Բանկիր*** – գ. **Դրամատեր,** банкир, banker.

***Բանկնոտ*** – գ. **Դրամանիշ, Դրամատոմս,** банкнот, banknote.

***Բարել*** – գ. Նավթամթերքների և սորուն նյութերի չափման միավոր՝ **Տակառ** (Անգլիայում հավասար է սորուն նյութերի համար 163,65 լ, ԱՄՆ-ում 115լ, նավթային տակառը ԱՄՆ-ում հավասար է 159լ), баррель, barrel.

***Բեմոլ*** – գ. *(երժշտ.)* Երաժշտական նշան, որ ձայնանիշի ձախ կողմում դրվելով՝ այն կես տոն իջեցնում է՝ **Կիսվար**, бемоль, bemol.

***Բիլիարդ*** – գ. **Գնդամուղ,** бильярд , billiard.

***Բիսկվիտ*** – գ. **Պաքսիմատ, Կրկնեփուկ,** бисквит, biscuit.

***Բլիցկրիգ*** – գ. *(գերմ.)* Արագ և անակնկալ հարձակում՝ **Շանթամարտ**, блицкриг, blitzkrieg.

***Բյուջե*** – գ. 1. Հասույթներն ու ծախքերը ցույց տվող հաշիվ, 2. Մուտքի և ելքի **Հաշվեցույց**, 3. Մուտքի և ելքի **Նախահաշիվ**, 4. **Ելնմտացույց**, бюджет, budget.

***Բյուրո*** – գ. **Գրասենյակ**, **Դիվանատուն**, бюро, office.

***Բոլշևիկ*** – գ. **Մեծամասնական**, большевик, bolshevik.

***Բոլշևիզմ*** – գ. **Մեծամասնականություն**, большевизм, bolshevism.

***Բորսա*** – գ. *(տնտես.)* Հաստատություն, ուր իրականացվում են արժեթղթերի, տարադրամի և ապրանքների առք ու վաճառք՝ **Սակարան**, биржа, stock exchange.

***Բոքսիտ*** – գ. Ալյումին ստանալու հումք՝ կավահող՝ **Արզնահող**, боксит, bauxite.

***Բրենդ*** – գ. Արտադրողի կամ վաճառողի հատուկ **Ապրանքանիշ**, **Վաճառանիշ**, бренд, brand.

***Բրոնխիտ*** – գ. *(ախտ.)* Շնչափողիկների բորբոքում՝ **Ցնցղաբորբ**, **Ցնցղատապ**, бронхит, bronchitis.

***Բուլավկա*** – գ. Ապահով գնդասեղ, **Կեռմայր**, булавка, pin.

***Բուլյոն*** – գ. 1. Խաշած մսի ջուր, 2. **Խաշու, 3. Արգանակ**, бульон, broth.

***Բուֆեր*** – գ. **Թափարգել, Բախարգել**, **Մեղմիչ**, буфер, buffer.

***Բուֆերային*** – ած. **Թափարգելային, Բախարգելային**, буфер, буферный, buffer.

## Գ

***Գամմա*** – գ. Եվրոպական նոտագրության ութ ձայների աստիճանակարգում՝ **Ձայնաշար**, гамма, gamma.

***Գաստրիտ*** – գ. *(ախտ.)* Ստամոքսի թաղանթի բորբոքում՝ **Ստամոքսատապ,** гастрит, gastritis.

***Գաստրոէնտերիտ*** – գ. *(ախտ.)* Ստամոքսի և աղիների թաղանթի բորբոքում՝ **Ստամոքսաղետապ**, гастроэнтерит, gastroenteritis.

***Գաստրոլ*** – գ. **Հյուրախաղ,** гастроль, tour.

***Գաստրոնոմ*** – գ. **Նպարախանութ**, гастроном, gastronome.

***Գարաժ*** – գ. **Ավտոտնակ,Կառատուն**, гараж, garage.

***Գեն*** – գ. Ժառանգական հատկությունների կրող՝ **Ծին**, ген, gene.

***Գենետիկ(ական)*** – ած. **Ծինական**: генетический, genetic.

***Գենոցիդ*** – գ. Ազգային, ցեղային, կրոնական և այլ հատկանիշներով պայմանավորված սպանություն՝ **Ցեղասպանություն**, геноцид, genocide.

***Գեոդեզիստ*** – գ. **Հողաչափ, Երկրաչափ, Աշխարհաչափ, Երկրաբաշխ,** геодезист, geodesist.

***Գեոպոլիտիկ*** – ած. Տարածաշրջանային քաղաքականությանը վերաբերող՝ **Աշխարհաքաղաքական,** геополитический, geopolitic.

***Գերբ*** – գ. Պետության **Զինանշան**, герб, blazon.

***Գիդ*** – գ. Զբոսաշրջիկներին ուղեկցող՝ **Ուղեվար**, гид, guide.

***Գիլյոտին*** – գ. *(ֆր.)* **Կառափնատ**, гильотина, guillotine.

***Գինեկոլոգ*** – գ. *(բժշկ.)* Կանացի հիվանդություն-ների բժիշկ՝ **Կնախտաբան, Կնախտաբույժ**, гинеколог, gynecologist.

***Գինեկոլոգիա*** – գ. *(բժշկ.)* Կանացի հիվանդություններ ուսումնասիրող և բուժող ճյուղ՝ **Կնախտաբանություն, Կնախտագիտություն**, гинекология, gynecology.

***Գիտաֆանտաստիկ*** *(վեպ)* – գ. 1. Հրաշքների՝ արկածների նկարագրություններով (վեպ), 2. **Հրաշավեպ**, научно-фантастический, sci-fi.

***Գլադիատոր*** – գ. *(պատմ.)* Հին Հռոմում գազանների հետ մարտընչող ատլետ՝ **Գազանամարտիկ**, гладиатор, gladiator.

***Գլիցերին*** – գ. **Քաղցրիտ,** глицерин, glycerol.

***Գլյուկոզա*** – գ. **Մրգաշաքար, Պտղաշաքար**, глюкоза, glucose.

***Գլոբալիզացիա*** – գ. **Համաշխարհայնացում,** глобализация, globalization.

***Գլոբուս*** – գ. **Աշխարհագունդ,** глобус, globe.

***Գրաֆիտ*** – գ. Մատիտի միջի ածուխը՝ **Ուրվաքար**, графит, graphite.

## Դ

***Դայջեսթ*** – գ. Լրագրերից քաղվածաբար հավաքված նյութեր՝ **Լրաքաղ**, дайджест, digest.

***Դեկադանս*** – գ. *(արվ.)* **Անկումայնություն, Անկապաշտություն**, декаданс, декадентство decadence.

***Դեկադենտ*** – գ. *(արվ.)* Անկումային տրամադրություններ ունեցող՝ **Անկապաշտ**, декадент, decadent.

***Դեկոլտե*** – գ.ած. **Լանջաբաց**, декольте, décolleté.

***Դեմագոգ*** – գ. **Ամբոխավար**, демагог, demagogue.

***Դեմագոգիա*** – գ. **Ամբոխավարություն**, демагогия, demagogy.

***Դեպրեսիա*** – գ. *(բժշկ.)* Ընկճվածության և ճնշվածության վիճակ՝ **Հոգեբեկում, Ընկճախտ,** депрессия, depression.

***Դեպուտատ*** – գ. **Պատգամավոր, Երեսփոխան,** депутат, deputy, delegate.

***Դեսերտ*** – գ. **Աղանդեր, Հետաճաշ,** десерт, dessert.

***Դետալ*** – գ. *(տեխ.)* Մեքենայի առանձին մասեր՝ **Պահեստամաս, Մանրակ, Մանրամաս, Մեքենամաս,** деталь, spare part.

***Դետերմինիզմ*** – գ. *(փիլ.)* Բնության և հասարակության բոլոր երևույթների օբյեկտիվ օրինաչափությունը և պատճառային պայմանավորվածությունը ընդունող ուսմունք՝ **Հատկավորություն, Սահմանականություն**, детерминизм, determinism.

***Դերմատոլոգիա*** – գ. **Մաշկաբանություն, Մորթաբանություն,** дерматология, dermatology.

***Դիագրամ*** – գ. **Տրամագիր**, диаграмма, chart, diagram.

***Դիալեկտիկա*** – գ. *(փիլ.)* **Տրամախոհություն**, диалектика, dialectics.

***Դիապրոյեկտոր*** – գ. Լուսապատկեր ցույց տալու սարք՝ **Մոզական լապտեր**, диапроектор, slide projector.

***Դիատոնիկ*** – ած.*(երժշտ.)* Ամբողջ և կես ձայներից բաղկացած՝ **Հարաձայն**, диатонический, diatonic.

***Դիեզ*** – գ. *(երժշտ.)* Երաժշտական նշան, որ ձայնանիշի ձախ կողմում դրվելով՝ այն կես տոն բարձրացնում է՝ **Կիսվեր**, диез, diez.

***Դիետ*** – գ. **Սննդականոն, Կերակրականոն, Կենցաղույթ, Պահեցողություն, Ողջականոն, Սննդառեժիմ,** диета, diet.

***Դիետոլոգ*** – գ. **Սննդագետ, Կերակրագետ**, диетолог, nutritionist.

***Դիետոլոգիա*** – գ. Գիտություն ճիշտ սնվելու կանոնների մասին՝ **Կերակրաբանություն, Կերակրագիտություն,** диетология, sitiology.

***Դիզենտերիա*** – գ. 1. Փորհարությունով և լուծով ուղեկցվող հիվանդություն՝ **Թանչ(ք)**, дизентерия, dysentery.

***Դիլեմա*** – գ. *(փիլ.)* **Երկընտրանք, Երկսայրաբանություն**, дилемма, dilemma.

***Դիկտոր*** – գ. Ռադիոյի և հեռուստատեսության **Հաղորդավար, Խոսնակ,** диктор, announcer.

***Դինամիզմ*** – գ. *(փիլ.)* Իդեալիստական փիլիսոփայական ուղղություն, որ ուժը դիտում է ինքնակա՝ մատերիայից անկախ սկիզբ՝ **Ուժաբանություն,** динамизм, dynamism.

***Դինամոմեքենա*** – գ. *(տեխն.)* Մեխանիկական ուժը էլեկտրականի վերածող սարք՝ **Ուժահան**, динамо-машина, dynamo.

***Դիսպետչեր*** – գ. **Կարգավար**, диспетчер, dispatcher.

***Դիվերսանտ*** – գ. **Խափանարար**, диверсант, saboteur.

***Դիվերսիա*** – գ. **Խափանարարություն**, диверсия, sabotage.

***Դիվերսիոն*** – գ. **Խափանարարական**, диверсионный, diverionary.

***Դիրեկտոր*** – գ. Հիմնարկության կամ ուսումնական հաստատության ղեկավար՝ **Տնօրեն**, директор, Director.

***Դիրեկցիա*** – գ. **Տնօրենություն**, дирекция, directorate.

***Դիրիժոր*** – գ. 1. Նվագախմբի ղեկավար՝ **Նվագավար**, дирижёр, conductor

***Դիֆթերիա*** – գ. *(ախտ.)* Մանկական վարակիչ հիվանդություն՝ **Կեղծամաշկություն,** дифтерия, diphtheria.

***Դիֆիրամբ*** – գ. Գովասանական բանաստեղծություն՝ **Ներբող, Գեղոն**, дифирамб, dithyramb.

***Դերմատոլոգ*** – գ. *(բժշկ.)* **Մաշկաբան, Մորթաբան,** дерматолог, dermatologist.

***Դերմատոլոգիա*** – գ. *(բժշկ.)* **Մաշկաբանություն, Մորթաբանություն**, дерматология, dermatology.

***Դոկտրին*** – գ. **Ուսմունք, Փիլիսոփայություն, Վարդապետություն**, доктрина, doctrine.

***Դրենաժ*** – գ. Առուների կամ խողովակների միջոցով ստորգետնյա ջրերը ցամաքեցնելը՝ **Ցամաքուրդ**, дренаж, drainage.
***Դևիզ*** – գ. Համառոտ նշում դրոշի կամ վահանի վրա (օր. *Մահ կամ Ազատություն*)՝ **Նշանադրոշմ,** девиз, motto.

# Է

***Էգոիզմ*** – **գ. Եսասիրություն, Եսականություն,** эгоизм, egoism.
***Էլեկտրոդ*** – գ. **Էլեկտրաբեր**, электрод, electrode.
***Էլեկտրաթերապիա*** – ած. գ. Էլեկտրականությամբ բուժող՝ **Էլեկտրաբույժ**, электротерапия, electrotherapy.
***Էլեկտրաքիմիա*** – գ. **Էլեկտրատարրաբանություն**, электрохимия, electrochemistry.
***Էլեկտրաֆոր*** – ած. գ. Իր մեջ էլեկտրականություն պահող, **Էլեկտրակիր,** электрофор, electrophoretic.
***Էլեկտորատ*** – գ. Ընտրողների հասարակական խավ՝ **Ընտրազանգված, Ընտրախավ**, электорат, electorate.

***Էլեկտրիկ*** – գ. Էլեկտրական գործերի մասնագետ՝ **Էլեկտրագետ**, электрик, electrician.

***Էլեկտրոլիզ*** – գ. **Էլեկտրալուծություն**, элекролиз, electrolysis.

***Էլիպս*** – գ. *(երկրչ.)* **Շեղատ,** эллипс, ellipse.

***Էկզեմա*** – գ. *(ախտ.)* Դեմքի մաշկի բորբոքում՝ **Թրմաքոս, Մրջմնոց,** экзема, eczema.

***Էկրան*** – գ. **Պաստառ,** экран, screen.

***Էմբարգո*** – գ. **Բեռնարգելք**, эмбарго, embargo.

***Էմբրիոն*** – գ. (*բժշկ.)* Արական և իգական բջիջների միացումով ստեղծված գոյացություն՝ **Նախասաղմ**, эмбрион, embryon.

***Էմոցիոնալ*** – ած. **Զգացական, Հոգեհույզ**, эмоциональный, emotional.

***Էմպիրիցիզմ*** – գ. *(փիլ.)* Զգայությունը իմացության միակ աղբյուրը համարող ուսմունք՝ **Փորձապաշտություն**, эмпирицизм, empiricism.

***Էնդոկրինոլոգիա*** – գ. *(բժշկ.)* **Ներծորագիտություն**, эндокринология, endocrinology.

***Էնդոսկոպ*** – գ. *(տեխն.)* Մարդու մարմնի ներքին օրգանները լուսավորելով տեսանելի դարձնող

սարք՝ **Ներդիտակ, Ներքնադիտակ**, эндоскоп, endoscope.

***Էնդոսկոպիստ*** – գ. *(բժշկ.)* Մարդկային մարմնի խոռոչները հատուկ դիտակով զննող բժիշկ՝ **Ներքնադետ,** эндоскопист, endoscopist.

***Էնցեֆալիտ*** – գ. *(ախտ.)* Ուղեղի բորբոքում՝ **Ուղեղաբորբ**, энцефалит, encephalitis.

***Էնցեֆալոգրամմա*** – գ. *(բժշկ.)* **Ուղեղագրություն,** энцефалограмма, encephalogram.

***Էնցիկլոպեդիա*** – գ. **Հանրագիտարան, Համայնագիտարան**, энциклопедия, encyclopedia.

***Էնցիկլոպեդիստ*** – ած.գ. **Բազմագիտակ, Հանրագետ**, энциклопедист, encyclopedist.

***Էսթետ*** – գ. **Գեղագետ, Գեղեցկագետ**, эстет, esthete.

***Էսթետիկա*** – գ. **Գեղագիտություն, գեղեցկագիտություն**, эстетика, aesthetics.

***Էսթետիկական*** – ած. **Գեղագիտական, Գեղեցկագիտական**, эстетический, aesthetic.

***Էսկալատոր*** – գ. **Շարժասանդուղք, սահասանդուղք**, эскалатор, escalator.

***Էսքիզ*** – գ. **Ուրվանկար, Ստվերագիր, Ուրվապատկեր**, эскиз, outline.

***Էվոլյուցիա*** – գ. 1. Առանց արնահեղության և ցընցումների դեպի կատարյալը աստիճանաբար կատարվող փոփոխություն, 2. Աստիճանական զարգացում՝ **Բարեշրջություն**, **Բնափոխություն**, **Շրջափոխություն**, эволюция, evolutuin.
***Էվֆեմիզմ*** – գ. *(լեզվ.)* Ոճական հնարանք՝ ասելիքը ավելի մեղմ և ընդունելի դարձնելու համար՝ **Մեղմասություն**, эвфемизм, euphemism.
***Էտալոն*** – գ. **Ստուգանմուշ**, **Չափանմուշ**, эталон, standard.
***Էքսկուրսավար*** – գ. **Առաջնորդ**, **Ղեկավար**, **Ուղեվար**, экскурсовод, guide.
***Էքսպանսիոնիզմ*** – գ. Աշխարհակալման ձգտում՝ **Ծավալապաշտություն**, экспансионизм, expansionism.
***Էքսպանսիոնիստ*** – ած. Աշխարհակալման ձգտող՝ **Ծավալապաշտ**, экспансионист, expansionist.
***Էքսպրեսիոնիզմ*** – գ. *(արվ.)* Ուղղություն արվեստում՝ **Արտահայտչապաշտություն**, экспрессионизм, expressionism.
***Էքսպրեսիոնիստ*** – գ. **Արտահայտչապաշտ**, экспрессионист, expressionist.
***Էֆտանազիա*** – գ. **Բարեսպանություն**, эфтаназия,

## Ժ

***Ժելե*** – գ. **Դոնդող, Մսադոնդող,** желе, jelly.

***Ժյուրի*** – գ. Մրցումների **Հանձնախումբ, Մրցատյան,** жюри, jury.

***Ժոկեյ*** – գ. Վարպետ հեծյալ՝ **Ձիարշավորդ, Ձիավարիկ,** жокей, jockey.

***Ժուռնալիստ*** – գ. Լրագրի աշխատակից՝ **Լրագրող,** журналист, journalist.

***Ժուռնալիստիկա*** – գ. **Լրագրություն,** журналистика, journalism

## Ի

***Իդեալ*** – գ. Ծայրագույն կատարելություն՝ **Կատարելատիպ,** идеал, ideal.

***Իդեալիզմ*** – գ. **Գաղափարապաշտություն, Տեսլապաշտություն,** идеализм, idealism.

***Իդեալիստ*** – գ. **Գաղափարապաշտ, Տեսլապաշտ,** идеалист, idealist.

***Իխտիոզ*** – գ. *(ախտ.)* Մաշկային հիվանդություն, դեպքում մաշկը ճաքճքում է՝ նմանվելով ձկան թեփուկների՝ **Ձկնամաշկություն**, ихтиоз, ichthyosis.

***Իմպերիալիզմ*** – գ. **Կայսերապաշտություն**, империализм, imperialism.

***Իմպերալիստական*** – ած. **Կայսերապաշտական,** империалистический, imperialistic.

***Իմպրեսիոնիզմ*** – գ. *(արվ.)* **Տպավորապաշտություն**, импрессионизм, impressionism.

***Իմպրեսիոնիստ*** – գ. *(արվ.)* **Տպավորապաշտ**, импрессионист, impressionist.

***Իմպրովիզատոր*** – գ. Հանպատրաստից խոսող՝ **Պատրաստաբան, Հանկարծաբան, Հանկարծաստեղծ,** импровизатор, improviser.

***Իմպուլսիվություն*** – գ. *(կենս.)* Անակնկալ հակազդեցություն գրգիռներին և մղումներին՝ **Հանկարծավարություն**, импульсивность, impulseveness.

***Ինաուգուրացիա*** – գ. Պետական կամ այլ բարձրաստիճան անձի պաշտոնն ստանձնելու արարողություն՝ **Պաշտոնակալություն, Երդմնակալություն**, инаугурация, inauguration.

***Ինդուկցիա*** – գ, Մասնակի երևույթների ընդհանրացում՝ **Մակածում,** индукция, induction.

***Ինդուստրիա*** – գ. **Արդյունաբերություն, Ճարտարարվեստ**, индустрия, industry.

***Ինդուստրիալ*** – ած. Ճարտարարվեստին հատուկ՝ **Ճարտարարվեստական**, индустриальный, industrial.

***Ինժեներ*** – գ. Բարձրագույն կրթությամբ տեխնիկական մասնագետ՝ **Ճարտարագետ**, инженер, engineer.

***Ինժեներական*** – ած. **Ճարտարագիտական**, инженерный, engineering.

***Ինիցիալ*** – գ. Հատուկ անունների սկզբնատառերը՝ **Անվանագիր**, инициалы, initials.

***Ինտելիգենտ*** – ած. Մտավոր բարձր զարգացում և բարեկիրթ վարքի տեր անձնավորություն՝ **Մտավորական**, интеллигент, intellectual.

***Ինտելիգենցիա*** – գ. Հասարակության մեջ սոցիալական խումբ, որի մեջ մտնում են մտավոր աշխատանքով զբաղվող և արհեստավարժ մարդիկ՝ **Մտավորականություն**, интеллигенция, intelligentsia.

***Ինտերնացիոնալ*** – ած.գ. **Միջազգայնական**, интернациональный, international.

***Ինտերնացիոնալիզմ*** – գ. Միջազգայնականություն, интернационализм, internationalism.

***Ինտերվալ*** – գ. *(երժշտ.)* **Անջրպետ**, **Տարածություն**, интервал, interval.

***Ինտերնետ*** – գ. Համաշխարհային համակարգչային ցանց՝ **Համացանց**, Интернет, internet.

***Ինտուիցիա*** – գ. 1. *(փիլ.)* Ճանաչողության ուղղակի և անմիջական ձև՝ առանց զգայարանների և տրամաբանության օգտագործման: 2. Ներհայեցողությամբ ստացված եզրակացություն՝ **Ներհայեցողություն**, **Բնազդ**, **Հայտնատեսություն**, интуиция, intuition.

***Ինֆիլտրացիա*** – գ. Հեղուկի դանդաղ անցնելը մարմնի ծակոտիներով՝ **Ներմուծում**, инфильтрация, infiltration.

***Ինֆլյացիա*** – գ. Դրամի **Արժեզրկում**, **Սղաճ**, инфляция, inflation.

***Ինֆորմատիկա*** – գ. Գիտաճյուղ տեղեկությունների հավաքման, կուտակման և հաղորդման մասին՝ **Տեղեկագիտություն**, информатика, informatics.

# Լ

***Լաբորատորիա*** – գ. 1. Աշխատավայր, Գործատեղի, **Աշխատանոց,** лаборатория, laboratory.

***Լամա*** – գ. **Այծուղտ, ուղտայծ**, лама, lama.

***Լամպաս*** – գ. Զինվորական համազգեստի տաբատի վրա կարվող գունավոր երիզ՝ **Շքերիզ**, лампас, trouser stripe.

***Լապորոսկոպիա*** – գ. *(բժշկ.)* Որովայնադիտում, лапороскопия, laporoskopia.

***Լավա*** – գ. Հրաբխի ժայթքման ժամանակ արտազատվող հրահեղուկ զանգված՝ **Հրանյութ**, лава, lava.

***Լավանդ(ա)*** – գ. 1. **Նարդոս,** 2. Նույն բույսից պատրաստված օծանելիք, лаванда, lavender.

***Լահմաջուն*** – գ. (*արաբ.* **միս խմորի մեջ**) **Մսաշոթ**, лагмаджун, lehmadzhun.

***Լիբերալ*** – ած. **Ազատական,** либеральный, liberal.

***Լիբերալիզմ*** – գ. **Ազատականություն**, либерализм, liberalism.

***Լիդեր*** – գ. **Առաջնորդ, Ղեկավար**, лидер, leader.

***Լիկյոր*** – գ. **Քաղցրօղի**, ликер, liquor.

***Լիմֆատիզմ*** – գ. Ավշային հիվանդություն, **Ավշախտ,** лимфатизм, glandular.

***Լիտոտա*** – գ. *(ոճար.)* 1. Խոսքի բանադարձում՝ չափազանցության հակառակը՝ **Նվազասույթ, Նվազասություն**, литота, litotes.

***Լոզունգ*** – գ. 1. **Նշանախոս, Նշանաբառ**, 2. **Կոչ, Կարգախոս**, лозунг, slogan.

***Լոխում*** – գ. Արևելյան քաղցրավենիք՝ **Հանգստապատառ, Քաղցրապատառ**, лукум, lohum.

***Լոկոմոտիվ*** – գ. Գնացքի քարշակը՝ **Շոգեքարշ, Ջերմաքարշ, Էլեկտրաքարշ, Վայրաշարժ**, локомотив, locomotive.

***Լոմբարդ*** – գ. **Գրավատուն,** ломбард, pawnshop.

***Լոռնետ*** – գ. Առանց պոչի, ձեռքով պահվող ակնոց՝ **Ձեռնաչոց,** лорнет, eyeglass.

***Լուսաֆոր*** – ած. գ. 1. Իր մեջ՝ իր վրա լույս կրող՝ **Լուսակիր, 2. Ազդալույս,** светофор, traffic light.

## Խ

***Խոլեստերին*** – գ. *(ախտ.)* Ճարպային բյուրեղներ արյան մեջ՝ **Մաղձետ**, холестерин, cholesterol.

# Կ

***Կաբինետ*** – գ. 1. **Նախարարների խորհուրդ, 2. Կառավարության ժողովատեղ, 3. Դահլիճ**, кабинет, cabinet.

***Կալեյդոսկոպ*** – գ. **Գեղադիտակ**, калейдоскоп, kaleidoscope

***Կալկուլյատոր*** – գ. *(տեխն.)* Թվաբանական գործողություններ կատարող հաշվիչ մեքենա՝ **Հաշվեմեքենա**, калькулятор, calculator.

***Կալորիա*** – գ. **Ջերմուժ**, калория, calorie.

***Կալցիում*** – գ. **Կրածին**, кальций, calcium.

***Կամերտոն*** – գ. Երաժշտական երկթև փոքրիկ գործիք, որ տալիս է «*լյա*» բնական ձայնը՝ **Ձայնորդ,** камертон, tuning fork.

***Կանիստր*** – գ. 20 լիտր տարողությամբ հերմետիկ փակվող բաք՝ **Թիթեղ**, канистра, tank.

***Կապիտալ*** – գ. Մայր գումար, **Դրամագլուխ**, капитал, capital.

***Կապիտալիզմ*** – գ. **Դրամատիրություն**, капитализм, capitalism.

***Կապիտալիստ*** – գ. Դրամատեր, капиталист, capitalist.

***Կապիտալիստական*** – ած. **Դրամատիրական**, капиталистический, capitalist.

***Կասետ*** – գ. Ձայնագրման նպատակով գործածվող մագնիսական ժապավեն՝ **Երիզ, Ձայներիզ,** кассета, cassette.

***Կատապուլտ*** – գ. Վթարի դեպքում օդաչուին օդանավից դուրս շպրտող սարք՝ **Ինքնանետիչ,** катапульта, catapults.

***Կարանտին*** – գ. Համաճարակի դեմ քառասնօրյա արգելարան՝ **Զգուշարան**, карантин, quarantine.

***Կարբոնատ*** – գ. Ածխաթթու պարունակող աղերի ընդհանուր անուն, **Բնածխատ**, карбонат, carbonate.

***Կարդիոգրամմա*** – գ. *(տեխն.)* Սրտի բաբախյունների արդյունքը արձանագրող գրաֆիկական պատկեր՝ **Սրտագրություն**, кардиограмма, cardiogram.

***Կարդիոլոգ*** – գ. *(բժշկ.)* **Սրտաբան**, кардиолог, cardiologist.

***Կարդիոլոգիա*** – գ. *(բժշկ.)* **Սրտաբանություն**, кардиология, cardiology.

***Կարտեր*** – գ. *(տեխն.)* **Հենատուփ**, картер, crankcase.
***Կարտոֆիլ*** – գ. **Գետնախնձոր,** картофель, potato.
***Կաուչուկենի*** – գ. Խեժատու ծառ՝ **Խժենի**, каучуковое дерево, rubber-tree.
***Կենգուրու*** - գ. **Ագեվազ**, кенгуру, kangaroo.
***Կինեմատիկա*** – գ. *(ֆիզ.)* Մեխանիկայի բաժին՝ **Շարժաբանություն**, кинематика, kinematics.
***Կինոֆիլմ*** – գ. **Շարժանկար, Շարժապատկեր**, кинофильм, movie.
***Կլառնետ*** – գ. **Նրբասրինգ,** кларнет, clarinet.
***Կլաուստրոֆոբիա*** – գ. Վախ փակ տարածությունից՝ **Բանտավախություն**, клаустрофобия, claustrophobia.
***Կլաքսոն*** – գ. Ավտոմեքենայի ձայնային ազդանշան՝ **Ճչակ, Ճչարձակ**, клаксон, klaxon.
***Կնոպկա*** – գ. **Մլկերիթ**, **Կոճգամ**, кнопка, pin.
***Կոալիցիոն*** – ած. **Համախմբական,** коалиционный, coalitional.
***Կոլեկցիոներ*** – գ. Հավաքածու կազմող անձ՝ **Հավաքորդ**, коллекционер, collector

***Կոկարդ*** – գ. (*պատմ.)* **Զինանշան** սաղավարտի, գլխարկի կամ համազգեստի վրա, кокарда, badge.

***Կոկետ(ուհի)*** – գ. 1. Կոտրատվող, 2. Նազուտուզ անող՝ **Պչրուհի, Անձկոտոր,** кокет(ка), coquette

***Կոմա*** – գ. *(ախտ.)* Մահվան քուն կամ թմբիր՝ **Մահաքուն, Մահաթմբիր**, кома, coma

***Կոմեդիա*** – գ. Երգիծական ներկայացում՝ **Կատակերգություն, Զավեշտախաղ, Ծաղրերգություն,** комедия, comedy.

***Կոմիկ*** – գ. 1.Կատակերգակ դերասան: 2. Կատակերգություն գրող՝ **Կատակերգու՝ Ծաղրերգու,** комик, comedian.

***Կոմպոտ*** – գ. **Պտղանուշ, Չամչարակ**, компот, compote.

***Կոմունիզմ*** – գ. **Համայնավարություն,** коммунизм, communism.

***Կոմունիստ*** – գ. **Համայնավար,** коммунист, communist.

***Կոմունիստական*** – ած. **Համայնավարական,** коммунистический, communist.

***Կոմպլեկտ*** – գ. Որևէ առարկայի՝ ապրանքի ողջ տեսականին ընդգրկող հավաքածու՝ **Լրակազմ**, комплект, set.

***Կոմպլեքս*** – գ. 1. Ստորակայության՝ Թերարժեքության զգացում, Բարդույթ, 2. (*շին.*) Համալիր, комплекс, complex.

***Կոմպյուտեր*** – գ. Մտասարք, Համակարգիչ, компьютер, computer.

***Կոմպոզիտոր*** – գ. Երգահան, композитор, composer.

***Կոմպրեսոր*** – գ. 1. *(տեխն.)* Խտացրած օդ մղող գործիք՝ Ճնշակ, компрессор, compressor.

***Կոմֆորտ*** – գ. Հարմարավետություն, Հարմարակեցություն, Դյուրակեցություն, Հեշտակեցություն, комфорт, comfort.

***Կոմֆորտային*** –ած. Հարմարավետ, Անդորրավետ, Դյուրակեցիկ, комфортный, comfortable.

***Կոնգլոմերատ*** – գ. Հանքախառնուրդ, Շեղջագոդ, конгломерат, conglomerate.

***Կոնսերվատորիա*** – գ. Երաժշտանոց, консерватория, conservatory.

***Կոնվեեր*** – գ. Հարահոս, конвейер, conveyor.

***Կոնտրաբաս*** – գ. Երաժշտական գործիք՝ Հակաբամբ, контрабас, contrabass.

***Կոնֆեդերացիա*** – գ. **Համադաշնություն**, конфедерация, confederation.

***Կոնֆեսիա*** – գ. Կրոնական նույն ուսմունքի մեջ այս կամ այն դավանանքին հետևողների խումբ, համայնք՝ կաթոլիկ, ուղղափառ, ավետարանչական, առաքելական և այլն՝ **Հարանվանություն**, конфессия, confession.

***Կոնֆրոնտացիա*** – գ. **Առճակատում**, конфронтация, confrontation.

***Կոսմետիկա*** – գ. **Դիմահարդարանք**, **Մարմնահարդարանք**, косметика, cosmetics.

***Կոսմոպոլիտ*** – գ. Իրեն որևէ երկրի քաղաքացի չհամարող՝ **Աշխարհաքաղաքացի**, **Տիեզերաքաղաքացի**, **Համրաքաղաքացի**, космополит, cosmopolitan.

***Կոսմոպոլիտիզմ*** – գ. **Աշխարհաքաղաքացիություն**, космополитизм, cosmopolitanism.

***Կոտլետ*** – գ. Փափուկ տապակած միս՝ **Կոդիկ**, котлета, cutlets.

***Կորալ*** – գ. Քարացած ծովային բույս՝ **Մարջան**, **Բուստ**, коралл, coral.

***Կորպուս*** – գ. *(շին.)* Միասնական շենքի մասերից յուրաքանչյուրը՝ **Մասնաշենք**, корпус, housing.

***Կորսաժ*** – գ. Կանացի զգեստ՝ **Կրծազգեստ**, корсаж, corsage

***Կորսետ*** – գ. **Մեղմիրան, Լանջազգեստ**, корсет, corset.

***Կվարտետ*** – գ. 1. Չորս միավորից բաղկացած ամբողջություն: 2. Չորս հոգուց բաղկացած երաժիշտների խումբ՝ **Քառյակ:** 3. Երաժշտական ժանր, квартет, quartet.

***Կրեդիտ*** – գ. Գիտելիքների գնահատման ծավալի միավոր՝ **Արժենիշ**, кредит, credit.

***Կուբիզմ*** – գ. (*արվ.*) Ուղղություն արվեստում՝ **Խորանարդապաշտություն**, кубизм, cubism.

***Կուլտուրա*** – գ. Մշակույթ, культура, culture.

***Կուպոն*** – գ. Արժեթղթի շահաբաժին՝ **Կտրոն**, купон, coupon.

## Հ

***Հակեր*** – **գ. Համակարգչահեն,** хакер, hacker.

***Հարդ դիսկ*** – գ. (*տեխն.*) Համակարգչի հիմնական հիշողությունն ամփոփող սկավառակ՝ **Կարծրապնակ**, жесткий диск, hard disc.

***Հելիոգրաֆ*** – գ. *(տեխն.)* 1. **Լուսահեռագիր**, 2. Արևը լուսանկարելու գործիք՝ **Արևագիր,** гелиограф, heliograph.

***Հեմատոլոգիա*** – գ. *(բժշկ.)* Արյունն ուսումնասիրող գիտաճյուղ՝ **Արյունաբանություն,** гематология, hematology.

***Հերբարիում*** – գ. Չորացված բույսերի և կենդանիների հավաքածու՝ **Բուսարան**, гербарий, herbarium.

***Հերմաֆրոդիտ*** – գ. *(բժշկ.)* Միաժամանակ արական և իգական սեռական գործարաններ ունեցող, **Արուէգ, Որձևէգ**: гермафродит, hermaphrodite.

***Հիդրոդինամիկա*** – գ. Ֆիզիկայի բաժիններից մեկը՝ **Ջրազորություն**, гидродинамика, hydrodynamics.

***Հիդրոպլան*** – գ. **Ջրասավառնակ**, гидроплан, hydroplane.

***Հիդրոստատիկա*** – գ. Ֆիզիկայի բաժիններից մեկը՝ **Ջրակայություն**, гидростатика, hydrostatics.

***Հիդրոֆոն*** – գ. Ստորջրյա հեռախոս՝ **Ջրահեռախոս, Ջրահեռաձայն**, гидрофон, hydrophone.

***Հիերարխիա*** – գ. Աստիճանակարգում վերից վար (զինվորական, հոգևորական և այլն)՝ **Կարգապետություն**, եկեղեցական՝ **Նվիրապետություն**, иерархия, hierarchy.

***Հիերոգլիֆ*** – գ. **Մեհենադրոշմ,** иероглиф, hieroglyph

***Հիմն*** – գ. **Օրհներգ, Փառերգ, Ազգային քայլերգ,** гимн, anthem.

***Հիպերբոլ*** – գ. 1*. (ոճ.)* **Չափազանցություն,** 2. *(մաթ.)* Երկրաչափական կոր գիծ՝ **Անդրաձիգ,** гипербола, hyperbole.

***Հիպոֆիզ*** – *(կենս.)* գ. Գլխուղեղում գտնվող գեղձ, որ կարգավորում է մարմնի աճը՝ **Մաղասագեղձ,** гипофиз, pituitary, body hypophisys.

***Հոմեոպաթիա*** – գ. *(բժշկ.)* Դեղորայքային բուժման մեթոդ, որը հիվանդությունը բուժում է այդ հիվանդության նմանակով վարակելով հիվանդին՝ **Նմանաբուժություն,** гомеопатия, homeopathy.

***Հոմոսեքսուալ*** – ած.գ. Սեռական հարաբերություն նույնասեռ անձերի միջև՝ **Միասեռական, Համասեռական,** гомосексуальный, homosexual.

***Հոմոսեքսուալիստ*** – գ. Իրար հետ սեռական հարաբերություն ունեցող նույն սեռի անձեր՝ **Միասեռական, Համասեռական,** гомосексуалист, gay.

***Հոմոսեքսուալիզմ*** – գ. Սեռական հարաբերություն նույնասեռ անձերի միջև՝ **Միասեռականու-**

**թյուն, Համասեռականություն,** гомосексуализм, homosexuality.

***Հոնորար*** – գ. Հեղինակին տրվող վարձատրություն՝ **Պատվագին**, гонорар, fee.

***Հորմոն*** – գ. *(կենս.)* **Ներազդակ, Ներզատուկ,** гормон, hormone.

***Հումոր*** – գ. Երգիծանքի մեղմ տեսակ՝ **Զվարթախոհություն**, юмор, humor.

***Հումուս*** – գ. Օրգանական նյութերի փտումից առաջացած նյութ, որ գործածվում է իբրև պարարտանյութ՝ **Բուսահող**, гумус, humus.

## Մ

***Մակետ*** – գ. Առարկայի փոքրացված նմուշ՝ **Մանրակերտ**, макет, layout.

***Մաղաղանոս*** – գ. **Ազատքեղ, Կարոս,** петрушка, parsley.

***Մանեքեն*** – գ. Զգեստներ ցուցադրող խրտվիլակ՝ **Մարդափոխան,** манекен, dummy.

***Մանիա*** – **գ. 1. Մտագարություն, 2.** Հետապնդման **մանիա՝ Հալածախտ**, мания (преследования), persecution mania.

***Մանոմետր*** – գ. *(տեխն.)* Գազային և հեղուկ մարմինների ճնշումը չափող գործիք, **Անգայտաչափ, Ճնշաչափ**, манометр, manometer

***Մաստիտ*** – գ. Կանացի կրծքագեղձերի քարանալու հիվանդություն՝ **Ստինքախտ**, **Մազկուլ**, мастит, mastitis.

***Մարազմ*** – գ. Ծերության հետևանքով հյուծվելը՝ **Զառամախտ**, **Ծյուրանք**, маразм, marasmus.

***Մարգարին*** – գ. Բուսական ծագում ունեցող յուղ, **Բուսայուղ**, маргарин, margarine.

***Մարժա*** – գ. *(տնտես.)* Տարադրամի առքի և վաճառքի միջև եղած տարբերությունը՝ **Տարբերույթ**, маржа, margin.

***Մարինադ*** – գ. Քացախի մեջ դրված բանջարեղեն՝ **Քացխու**, маринад, pickle.

***Մարիոնետ*** – գ. **Խրտվիլակ, Խամաճիկ**, марионетка, Marionette.

***Մաքս*** – գ. Որևէ տեղից անցնելու համար վճարվող գումար՝ **Անցագին**, пошлина, tax.

***Մաքսիմալիստ*** – ած.գ. Ամեն ինչում առավելագույն կատարելության ձգտող՝ **Կատարելապաշտ,** максималист, maximalist.

***Մեդիում*** – գ. **Ոգեմիջնորդ,** медиум, medium.

***Մելանխոլիա*** – գ. **Մելամաղձություն, Սևախտ,** меланхолия, melancholia.

***Մելանոմա*** – գ. *(ախտ.)* Մաշկի վրա գոյացող գորշ ուռուցք՝ **Մելանուռ,** меланома, melanoma.

***Մելոման*** – գ. **Նվագամոլ,** меломан, music lover.

***Մեխանիկ*** – գ. Մեքենագիտության մասնագետ՝ **Մեքենագետ,** механик, mechanic.

***Մեխանիկա*** – գ. **Մեքենագիտություն**, механика, mechanics.

***Մենինգիտ*** – գ. *(ախտ.)* Ուղեղի թաղանթի բորբոքում՝ **Ուղեղափառատապ, Մզնատապ,** менингит, meningitis.

***Մենյու*** – գ. **Կերակրացանկ, Ճաշացանկ, Ճաշացուցակ,** меню, menu.

***Մետալոիդ*** – գ. *(քիմ.)* Մետաղի նմանվող տարր՝ **Մետաղակերպ**, металлоид, metalloid.

***Մետամորֆոզ*** – գ. **Կերպարանափոխություն, Փոխակերպում, Հեղազանցություն**, метаморфоза, metamorphosis.

***Մետաֆիզիկա*** – գ. **Բնազանցություն**, метафизика, metaphysics.

***Միավալենտ*** – ած. *(քիմ.)* **Միարժույթ, Միարժեն**, одновалентный, monovalent.

***Միլիտարիստ*** – գ. **Ռազմամոլ, Ռազմապաշտ**, милитарист, militarist.

***Միկրոբ*** – գ. **Մանրէ, Կենսիկ**, микроб, microbe.

***Միկրոալիքային վառարան*** – գ. **Շողահնոց**, микроволновая печь, microwave.

***Միկրոֆոտոնկար*** – գ. Խոշորացույցով երևացող լուսանկար՝ **Մանրալուսանկար**, микро фото, micro photo.

***Միրաժ*** – գ. 1. Տեսողական պատրանք՝ **Կրկներևույթ, Առաչոք**, мираж, mirage.

***Մոթել*** – գ. 1. **Իջևանատուն** ճանապարհների վրա: 2. **Հյուրանոց, Պանդոկ**, мотель, motel.

***Մոնոլիտ*** – Քարի մեկ միասնական զանգվածից պատրաստված կառույց՝ **Մենաքար,** монолит, monolith.

***Մոնոկլ*** – գ. **Մենակնոց,** монокль, monocle.

***Մորատորիում*** – գ. Սպառազինությունների մրցավազքի դադարեցում՝ հետաձգում՝ **Զինարգել,** мораторий, moratorium.

***Մորֆին*** – գ. Թմրադեղ՝ **Մրափոն**, морфин, morphine.

***Մուսլին*** – գ. Նուրբ կտավ՝ **Մարմաշ, Անկլիկ,** муслин, muslin.

***Մուտացիա*** – գ. *(կենս.)* Օրգանիզմի ժառանգական մեխանիզմում միանգամից կատարված փոփոխություն՝ **Հանկարծաշրջում** , мутация, mutation.

## Յ

***Յոդ*** – գ. **Մանիշ**, Йод, iodine.

# Ն

***Նատուրալիզմ*** – գ. *(արվ.)* **Բնութենապաշտություն**, натурализм, naturalism.

***Նավթ*** – գ. **Քարյուղ**, нефть, oil.

***Նեֆրիտ*** – գ. *(ախտ.)* Օրգանիզմի թունավորում միզանյութերով՝ **Երիկամաբորբ, Միզուտ,** нефрит, jade.

***Նիհիլիզմ*** – գ. *(փիլ.)* **Ոչնչապաշտություն, Ոչնչականություն**, нигилизм, nihilism.

***Նիհիլիստ*** – ած. գ. *(փիլ.)* **Ոչնչական, Ոչնչապաշտ**, нигилист, nihilist.

***Նիտրատ*** – գ. *(քիմ.)* Բորակային թթվի աղ, որ առաջանում է ազային թթվուտի բաղադրությունից՝ **Բորակատ**, нитрат, nitrate.

***Նոկտյուրն*** – գ. **Գիշերերգ,** ноктюрн, nocturne.

***Նոմենկլատուրա*** – գ. 1. Անունների կարգ, ցանկ՝ **Անվանակարգ**, 2. Արվեստի կամ գիտության վերաբերյալ **Բառացանկ**, номенклатура, nomenclature.

***Նոստալգիա*** – գ. Կարոտելու հիվանդություն՝ **Կարոտախտ**, **Հայրենաբաղձություն**, ностальгия, nostalgia.

***Նովել*** – գ. Անակնկալ ավարտով կարճ պատմվածք՝ **Նորավեպ,** новелла, novel.
***Նուդիզմ*** – գ. Ուղղություն կյանքում և արվեստում՝ **Մերկապաշտություն,** нудизм, nudism.
***Նևրաստենիա*** – գ. Կենսական ուժերի նվազում՝ **Անուժություն՝ Կենսանվազություն,** неврастения, neurasthenia.
***Նևրոզ*** – գ. *(ախտ.)* Նյարդային հիվանդություն՝ **Ջղախտ**, невроз, neurosis.
***Նևրոպաթոլոգ*** – գ. *(բժշկ.)* Նյարդային հիվանդությունների բժիշկ՝ **Նյարդաբան, Ջղախտաբույժ,** невропатолог, neuropathist.

## Շ

***Շանսոն(ետ)*** **– գ. Զվարճերգ,** шансонет(ка), shansonet.
***Շասսի*** – գ. *(տեխն.)* **Հենասարք**, шасси, chassis.
***Շարմանկա*** – գ. Երաժշտական գործիք՝ լարավոր կամ ստեղնավոր, որ գործարկվում է բռնակը պտտելու միջոցով՝ **Անվաչութակ**, шарманка, hurdy-gurdy.

***Շարֆ*** – գ. Վիզը պատող շալ՝ **Փողպատ**, шарф, scarf.
***Շաբլոն*** – գ. 1. **Ձևանմուշ**, 2. Հաստրակ, էժանագին կտոր, որ դերձակության՝ ձևարարության մեջ գործածվում է նախնական չափսերը վերցնելու համար՝ **Արայիշ**, шаблон, template.
***Շիզոֆրենիա*** – գ. *(ախտ.)* **Մտահեղձում,** шизофрения, schizophrenia.
***Շլագբաում*** – գ. Անցնելն արգելող ցանց, ցանցարգել՝ **Ուղեփակոց, Անցարգել,** шлагбаум, barrier.
***Շոկոլադ*** – գ. **Կոլահատ,** шоколад, chocolate.
***Շտաբ*** – գ. **Սպայակույտ,** штаб, staff.
***Շտեմպել*** – գ. Նամակադրոշմ՝ **Դրոշմակ,** штемпель, stamp.

## Պ

***Պակտ*** – գ. Պետությունների միություն՝ **Դաշինք՝ Ուխտ,** пакт, pact.
***Պանթեիզմ*** – գ. *(փիլ.)* Փիլիսոփայական ուղղություն, որ բնության մեջ տեսնում է Աստծուն՝ **Բնապաշտություն**, пантеизм, pantheism.

***Պանթեիստ*** –ած. գ. *(փիլ.)* Բնությունը և բնական երևույթները պաշտող, **Բնապաշտ,** пантеист, pantheist.
***Պանորամա*** – գ. **Համայնապատկեր, Շրջատեսարան,** панорама, panorama.
***Պառլամենտ*** – գ. Իշխանության օրենսդիր մարմին՝ **Խորհրդարան**, парламент, parliament.
***Պաստել*** – գ. Ածուխով նկարված պատկեր՝ **Ածխանկար**, пастель, pastel.
***Պարադիգմա*** – գ. *(լեզվ.)* Բառի բառաձևերի ամբողջությունը՝ **Հարացույց,** парадигма, paradigm.
***Պարադոքս*** – գ. Նորօրինակ դատողություն, որ հակասում է բոլորի կողմից ընդունվածին՝ **Հարակարծություն**, парадокс, paradox.
***Պարաշյուտ*** – գ. **Անկարգել, Կանխարգել**, парашют, parachute.
***Պարաշյուտիստ*** – գ. **Անկարգելորդ, Անկարգելավոր,** парашютист, skydiver.
***Պարոլ*** – գ. **Նշանաբառ, Անցաբառ**, пароль, password.
***Պարֆյումեր*** – գ. Օծանելիք վաճառող՝ **Հոտավաճառ,** парфюмер, perfumer.

***Պեդիկյուր*** – գ. Ոտքերի եղունգների խնամք և հարդարում՝ **Ոտնահարդարում,** педикюр, pediker.

***Պեդոֆիլ*** – գ. **Մանկապիղծ, Մանկամոլ,** педофил, pedophile.

***Պեմզա*** – գ. Ծակոտկեն քար՝ **Սպնգաքար**, пемза, pumice.

***Պեյզաժիստ*** – գ. **Բնանկարիչ, Դաշտանկարիչ**, пейзажист, landscape-painter.

***Պետիցիա*** – գ. Հանրության կողմից ստորագրված ու ներկայացված **Խնդրագիր, Աղերսագիր՝ Հանրագրություն, Հանրագիր**, петиция, petition.

***Պերիսկոպ*** – գ. Սուզանավի հատուկ դիտակ՝ շուրջքոլորը դիտելու համար՝ **Շրջադիտակ**, перископ, periscope.

***Պիկնիկ*** – գ. Բացօթյա խրախճանք՝ **Դաշտագնացություն, Դաշտահանդես,** пикник, picnic.

***Պինցետ*** – գ. **Անիծքաշ,** пинцет, tweezers.

***Պիպետկա*** – գ. Աչքին դեղ կաթեցնելու ապակյա սրվակ՝ **Շթահամար**, пипетка, pipette.

***Պլատին*** – գ. **Լուսնոսկի,** платина, platinum.

*Պլատֆորմ* – գ. 1. Հենք, 2. Ընտրական պլատֆորմ՝ նախընտրական ծրագրերի ամբողջություն՝ **Ընտրահենք**, платформа, platform.

*Պլինտուս* – գ. Պատի և հատակի անկյունը քողարկող ձևավոր փայտ՝ **Շրիշակ**, плинтус, plinth.

*Պլևրիտ* – գ. *(ախտ.)* Թոքամիզի բորբոքում՝ **Թաղանթատապ**, плеврит, pleurisy.

*Պյուրե* – գ. Օսլայով և շաքարով մանկական ուտելիք՝ **Բուր**, пюре, puree.

*Պնևմատիկ* – ած. Խտացված օդի ճնշումով գործող՝ **Օդաճնշական**, пневматический, pneumatic.

*Պոլարիմետր* – գ. Գործիք, որ ցույց է տալիս ձգողական ուժի շեղումը՝ **Բևեռաչափ**, поляриметр, polarimeter.

*Պոլիկլինիկա* – գ. **Բուժարան, Դարմանատուն**, поликлиника, policlinic.

*Պոլիուրիա* – գ. **Հաճախամիզություն, Բազմամիզություն**, полиурия, ulorrhagia.

*Պոմիդոր* – գ. **Տոմատ, Լոլիկ**, томат, помидоры, tomato.

*Պոստ-սյուրռեալիզմ* – գ. *(արվ.)* **Հետ-գերիրապաշտություն,** пост-сюрреализм, post-surrealism.

***Պոտենցիա*** – գ. **Ներուժ, Կարողականություն**, потенция, potency.

***Պոտենցիալ*** – ած. **Ներուժ՝ Կարողականություն ունեցող**, потенциальный, potential.

***Պրեզենտացիա*** – գ. 1. **Փառաբանություն, 2. Շնորհավորանք, 3. Շնորհանդես, Գինեձոն**, презентация, presentation.

***Պրեզերվատիվ*** – գ. **Անդամաշապիկ, Պահպանակ**, презерватив, condom.

***Պրեմիերա*** – **գ. Առաջնախաղ, Բեմել**, премьера, premiere.

***Պրես-կոնֆերանս*** – գ. **Մամուլի կոնֆերանս, Ասուլիս**, пресс-конференция, press-conference.

***Պրետենցիոզ*** – ած. **Հավակնոտ, Հավակնամիտ**, претенциозный, flatulent.

***Պրիզմա*** – գ. *(երկրչ.)* **Հատվածակողմ**, призма, prism.

***Պրոբ*** – գ. Թանկարժեք մետաղների ձուլվածքների վրա դրվող դրոշմ, կնիք, որը ցույց է տալիս ազնիվ մետաղների պարունակության տոկոսը՝ **Հարգ, Հարգադրոշմ, Հարգանիշ, Փորձադրոշմ**, проба, sample.

***Պրոգրեսիա*** – *(մաթ.)* գ. **Սաստկացում, Առաջանցում**, прогрессия, progression.

***Պրոպագանդիստական*** – ած. **Քարոզչական**, пропагандистский, propagandistic.

***Պրոպելլեր*** – գ. *(տեխն.)* Օդանավի պտուտակ՝ **Օդապտուտակ**, пропеллер, propeller.

***Պրոտոպլազմա*** – գ. *(կենս.)* Բջջի միջուկը կազմող նյութ՝ **Նախանյութ**, протоплазма, protoplasm.

***Պրոֆեսիոնալ*** – ած.գ. Իր մասնագիտության մեջ հմուտ՝ **Արհեստավարժ**, профессиональный, professional.

***Պրոֆեսիոնալիզմ*** – գ. **Արհեստավարժություն**, профессионализм, professionalism.

***Պրոֆեսոր*** – գ. Ավագ ուսուցիչ՝ **Ուսուցչապետ**, профессор, professor

***Պրոֆիլ*** – գ. Դեմքի մի կողմը պատկերող նկար՝ **Կիսադեմ**, профиль, profile.

***Պուանտիզմ*** – գ. Ուղղություն արվեստում՝ **Կիտապաշտություն**, пуантизм, puantizm.

***Պուլտ*** – գ. **Հեռավար, пульт, remote controller.**

# Ռ

***Ռադիկալ*** – ած.*(փիլ.)* **Արմատական,** радикальный, radical.

***Ռադիկալիզմ*** – ած. **Արմատականություն,** радикализм, radicalism.

***Ռադիո*** – գ. **Ձայնասփյուռ,** радио, radio.

***Ռադիոակտիվ*** – ած. Ռադիացիոն ճառագայթներ արձակող՝ **Ճառագայթագործոն,** радиоактивный, radioactive.

***Ռադիոթերապիա*** – գ. **Ճառագայթաբուժում, Շողաբուժում,** радиотерапия, radiotherapy.

***Ռադիոլոգ*** – գ. Ռադիոակտիվ նյութերով աշխատող՝ **Շողաբան**, радиолог, radiologist.

***Ռախիտ*** – գ. **Ոսկրաթեքություն, Ողնակորություն,** рахит, rickets.

***Ռակետ (թենիսի)*** – գ. **Թևճակ**, ракетка, racket.

***Ռացիոնալիստ*** – գ. Ամեն ինչ տրամաբանությամբ բացատրող ուսմունքի հետևորդ՝ **Բանապաշտ**, рациналист, ratoinalist.

***Ռացիոնալիզմ*** – գ. *(փիլ.)* **Բանապաշտություն,** рационализм, rationalism.

***Ռեալիզմ*** – գ. **Իրապաշտություն**, реализм, realism.
***Ռեալիստ*** – ած. գ. **Իրապաշտ**, реалист, realist.
***Ռեակցիա*** – գ. 1. **Հակազդեցություն**: 2. **Անդրադարձ**, реакция, reaction.
***Ռեբուս*** – գ. **Նկարահանելուկ**, **Նշանահանելուկ**, ребус, rebus.
***Ռեժիսոր*** – գ. **Բեմադրիչ**, **Բեմավար**, **Դերուսույց**, режиссер, director.
***Ռելյատիվիզմ*** – գ. Ուսմունք մարդկային գիտելիքների հարաբերականության, պայմանականության և սուբյեկտիվ բնույթի մասին՝ **Հարաբերապաշտություն**, релятивизм, relativism.
***Ռեկորդ*** – գ. *(մարզ.)* Մրցման ժամանակ ձեռք բերված բարձրագույն արդյունք՝ **Մրցանիշ**, рекорд, record.
***Ռեմարկ*** – գ. Դրամատիկական երկերում հեղինակային նշումներ կատարելը՝ **Նշագրում**, ремарка, remark.
***Ռեյտինգ*** – գ. **Վարկանիշ**, рейтинг, rating.
***Ռետրոսպեկտիվ*** – գ. Դեպի հետ նայող՝ **Հետահայաց**, ретроспективный, retrospective.

***Ռիթմ*** – գ. 1. **Կշռույթ, Կշռականություն**, 2. *(բժշկ.)* **Զարկ, Սրտազարկ**, ритм, rhythm.

***Ռիթմիկ*** – ած. **Կշռութային, Կշռութավոր**, ритмический, ритмичный, rhythmical.

***Ռոբոտ*** – գ. **Մարդամեքենա**, робот, robot.

***Ռևիզոր*** – գ. Հաշիվները քննող՝ **Հաշվեքննիչ, Վերաքննիչ**, ревизор, auditor.

***Ռուլետկա*** – գ. **Չափերիզ**, рулетка, roulette.

## Ս

***Սաբոտաժ*** – գ. **Նենգադուլ**, саботаж, sabotage.

***Սամմիթ*** – գ. Պետությունների ղեկավարների մասնակցությամբ միջազգային հավաք, **Գագաթ(ն)աժողով, Գերաստիճան, Խորհրդաժողով, Վեհաժողով**, саммит, summit.

***Սայթ*** – գ. Համացանցային հասցե՝ **Կայք, Կայքէջ**, сайт, site.

***Սելեն*** – գ. *(քիմ.)* **Լուսնաղ**, селена, selenium.

***Սելենիտ*** – գ. *( քիմ.)* **Լուսնաքար**, селенит, selenite.

***Սեկտոր*** – գ. *(երկրչ.)* **Հատված**, сектор, sector.

***Սեկցիա*** – գ. Օղակայաններում դեպի համապատասխան ելքը տանող միջանցք՝ **Վանդակորմ**, секция, section.

***Սեյսմոգրաֆ*** – գ. *(տեխն.)* Երկրակեղևի ցնցումներն արձանագրող սարք՝ **Ցարժագիր**, сейсмограф, seismograph.

***Սենատ*** – գ. 1. Ավագների ժողով: 2. Բարձրագույն օրենսդիր մարմին՝ **Ծերակույտ**, сенат, senate.

***Սենատոր*** – 1. ած. Ծերակույտին վերաբերող: 2. գ. Ծերակույտի անդամ՝ **Ծերակուտական**, сенатор, senator.

***Սենդվիչ*** – գ. Լավաշ՝ մեջը միս, պանիր և այլն՝ **Լոլաձ**, сендвич, sandwich.

***Սենսուալիզմ*** – գ. 1. Փիլիսոփայական ուղղություն, ըստ որի բոլոր գաղափարների հիմքում ընկած են զգայությունները՝ **Զգայապաշտություն**, сенсуализм, sensualizm.

***Սենսուալիստ*** – ած. 1. Զգայապաշտությանը հետևող՝ **Զգայապաշտ**, сенсуалист, sensualist.

***Սեքսոլոգիա*** – գ. Գիտաճյուղ սեռային վարքի մասին՝ **Սեռախոսություն, Սեռաբանություն**, сексология, sexology.

***Սիգար*** – գ. **Ծխագլան**, сигара, cigar.

***Սիգարետ*** – գ. 1. **Գլանակ**, 2. **Ծխախոտ**՝ **Ծխագլանիկ, Ծխիկ**, сигарета, cigarette.

***Սիեստա*** – գ. Ճաշից հետո քնելը՝ **Ճաշքուն**, сиеста, siesta.

***Սիլլոգիզմ*** – գ. Տրամաբանական փաստարկման ձև՝ **Հավաքաբանություն**, силлогизм, syllogism.

***Սիլուետ*** – *գ.* Դեմքի ուրվագիծ ՝**Ստվերագիծ, Դիմաստվեր**, силует, silhouette.

***Սիմվոլիզմ*** – գ. *(արվ.)* **Խորհրդապաշտություն**, символизм, symbolism.

***Սիմվոլիստ*** – գ. *(արվ.)* **Խորհրդապաշտ**, символист, symbolist.

***Սիմվոլիստական*** – ած. *(արվ.)* **Խորհրդապաշտական**, символистический, symbolic.

***Սիմֆոնիա*** – գ. **Համանվագ**, симфония, symphony.

***Սինդիկատ*** – գ. Արհեստակցական միություն՝ **Արհեստապետություն**, синдикат, syndicate.

***Սինդրոմ*** – գ. **Համախտանիշ**, синдром, syndrome.

***Սինուսոիդ*** – գ. Լեզվաբանության մեջ ձայնի գծապատկեր՝ **Ձայնագծում**, синусоид, sinusoid.

***Սիֆիլիս*** – գ. *(ախտ.)* **Վեներախտ, Ֆրանկախտ,** сифилис, syphilis.

***Սիֆոն*** – գ. **Կնճափող, Սելկանոթ,** сифон, siphon.

***Սկանդալ*** – գ. 1. **Կռիվ, Վեճ, Տուրուդմբոց** , **2.** Լայնորեն հայտնի դարձած **Խայտառակություն, 3. Գայթակղություն**, скандал, scandal.

***Սկարլատինա*** – գ. Տարափոխիկ հիվանդություն՝ **Քութեշ**, **Շառատենդ, Կարմրախտ**, скарлатина, scarlet fever.

***Սկաուտ*** – գ. Մանկական զանգվածային կազմակերպության անդամ՝ **Արենուշ** (աղջիկ), **Գայլիկ, Արի** (տղա), скаут, scout.

***Սկլերոզ*** – գ. Արյունատար անոթների կարծրացում՝ **Կարծրուկ**, склероз, sclerosis.

***Սյուժե*** – գ. Դեպքերի հաջորդական ընթացք՝ **Դիպաշար**, сюжет, story.

***Սյուրռեալիզմ*** – գ. *(արվ.)* **Գերիրապաշտություն,** сюрреализм, surrealism.

***Սյուրռեալիստ*** – գ. *(արվ.)* **Գերիրապաշտ,** сюрреалист, surrealist.

***Սյուրռեալիստական*** – ած. *(արվ.)* **Գերիրապաշտական,** сюрреалистический, surreal.

***Սոլո*** – գ. **Մեներգ, Առանձներգ, Մենանվագ**, соло, solo.

***Սոնետ*** – գ. 14 տողանոց բանաստեղծություն՝ **Ձայնյակ, Հնչյակ,** сонет, sonnet.

***Սոցիալական*** – ած. Հասարակությանը վերաբերող՝ **Ընկերային**, социальный, social.

***Սոցիալիստ*** – գ. Սոցիալիստական գաղափարների կրող՝ **Ընկեր(ա)վար,** социалист, socialist.

***Սոցիալիստական*** – ած. **Ընկեր(ա)վարական**, социалистический, socialistic.

***Սոցիալիզմ*** – գ. **Ընկեր(ա)վարություն,** социализм, socialism.

***Սոցիոլոգ*** – գ. Սոցիալական հարցերով զբաղվող գիտնական՝ **Ընկերաբան,** социолог, sociologist.

***Սոցիոլոգիա*** – գ. **Ընկերաբանություն**, социология, sociology.

***Սոցիոլոգիական*** – ած. Սոցիոլոգիային վերաբերող՝ **Ընկերաբանական**, социологический, sociological.

***Սպեկտր*** – Գունավոր ճառագայթների ամբողջությունը՝ **Լուսապատկեր**, спектр, range.

***Սպեկտրոսկոպ*** – գ. Գունաբաժան գործիք՝ **Լուսապատկերացույց**, спектроскоп, spectroscope.

***Սպեկուլյանտ*** – գ. Ցածր գնով գնող և բարձր գնով վերավաճառող՝ **Շահագետ, Շահաղետ,** спекулянт, speculator.

***Սպերմատոզոիդ*** – գ. Արական սեռական բջիջ՝ **Սերմնակենդան, Սերմնակենսիկ, Սերմնէակ,** сперматозоид, sperm.

***Սպիդոմետր*** – գ. *(տեխն.)* 1. **Արագաչափ,** 2. Անցած ճանապարհը ցույց տվող չափ՝ **Ուղեչափ,** спидометр, speedometer.

***Սպիրիտիզմ*** – գ. **Ոգեհավատություն,** спиритизм, spiritualism.

***Սպոր*** – գ. Սովորաբար միաբջիջ գոյացություններ, որոնք ծառայում են անսեռ բազմացման համար՝ **Սերմնիկ**, спора, spore.

***Սվաստիկա*** – գ. Կեռ թևերով խաչ՝ **Կեռխաչ**, свастика, swastika.

***Ստալակտիտ*** – գ. *(հնք.)* Քարանձավի պատերին, հատակին և առաստաղին գոյացած կրային բյուրեղանման քար՝ **Շթաքար**, **Ծորաքար**, сталактит, stalactite.
***Ստատիկա*** – գ. Մեխանիկայի մի բաժինը՝ **Կայաբանություն**, статика, statics.
***Ստատիստիկա*** – գ. **Վիճակագրություն, Կայագրություն**, статистика, statistics.
***Ստետոմետր*** – գ. Կրծքի կորությունը, շրջագիծը, կրծքավանդակի ծավալն ու կծկումը չափող գործիք՝ **Կրծաչափ**, стетометр, stethometer.
***Ստետոսկոպ*** – գ. Սրտի ու թոքերի աշխատանքը լսելու գործիք՝ **Կրծադետ**, стетоскоп, stethoscope.
***Ստետոսկոպիա*** – գ. Սրտի և թոքերի քննություն կրծադետով՝ **Կրծադիտություն**, стетоскопия, stethoscopy.
***Ստերեոսկոպ*** – գ. *(տեխն.)* Սարք, որ հնարավորություն է տալիս ստանալ առարկաների ոչ թե միաչափ, այլ ծավալային պատկերները՝ **Հաստատացույց**, стереоскоп, stereoscope.
***Ստերեոտիպ*** – գ. **Կարծրատիպ, Հաստատատիպ**, стереотип, stereotype.

***Ստիլյագ*** – գ. Նորաձևության մոլի հետևորդ՝ **Տարազամոլ,** стиляга, mod.

***Ստրատեգիա*** – գ. Պատերազմներ վարելու արվեստը և դրա տեսությունը՝ **Ռազմավարություն,** стратегия, strategy.

***Ստրեպտոբացիլ*** – գ. *(կենս.)* **Շարացպիկ,** стрептобациллы, streptobacillus.

***Ստրիպտիզ*** – գ. **Մերկապար, Հեստապար,** стриптиз, striptease.

***Սցենար*** – գ. **Բեմագիր,** сценарий, scenario.

***Սուբյեկտիվ*** – ած. Անձնական կարծիքի կամ ճաշակի վրա հիմնված՝ **Ենթակայական,** субъективный, subjective.

***Սուլֆատ*** – գ. *(քիմ.)* Ծծմբական թթվի աղ՝ **Ծծըմբատ** сульфат, sulfate.

***Սուպերշապիկ*** – գ. Գրքի երկրորդ շապիկը, կազմը՝ **Կրկնաշապիկ,** суперобложка, book jacket.

***Սուռոգատ*** – գ. Որակյալ նյութին փոխարինող անորակ նյութ՝ **Փոխանյութ,** суррогат, surrogate.

***Սուվերենություն*** – գ. **Ինքնիշխանություն, Գերիշխանություն,** суверенность, sovereignty.

***Սփիքեր*** – գ. 1. Համերգ՝ հանդես վարող՝ **Հանդիսավար**: 2. Խորհրդարանի նախագահ՝ **Խոսնակ**, спикер, speaker.

## Վ

***Վազելին*** – գ. **Նավթաձարպ,** вазелин, vaseline.

***Վալյուտա*** – գ. 1. Դրամանիշի օրվա փոխարժեքը: 2. Օտար դրամանիշ՝ **Արժույթ, Տարադրամ,** валюта, currency.

***Վիզա*** – գ. Երկիր այցելելու հրավեր՝ **Այցեգիր**, виза,visa.

***Վիտամին*** – գ. **Կենսանյութ**, витамин, vitamin.

***Վիտրաժ*** – գ. **Ապակենկարչություն,** витраж, stained-glass window.

## Տ

***Տակտիկա*** – գ. **Մարտավարություն, Զորակարգություն, Գերակարգություն,** тактика, tactics.

***Տանկ*** – գ. **Հրասայլ, Մարտասայլ**, танк, tank.
***Տանկիստ*** – գ. Հրասայլը վարող՝ **Հրասայլորդ**, танкист, trooper.
***Տաշիզմ*** – գ. *(արվ.)* Ուղղություն նկարչության մեջ՝ **Բծապաշտություն,** ташизм, Tachisme.
***Տարա*** – գ. Այն, ինչի մեջ պահվում է ապրանքը՝ **Կշռորդ**, тара, container.
***Տարիֆ*** – գ. *(տնտես.)* **Գնացուցակ,** тариф, tariff, rate.
***Տաքսի*** – գ. **Վարձակառք,** такси, taxi.
***Տելեքս*** – գ. *(տեխն.)* **Հեռատիպ,** телекс, telex.
***Տեխնիկ*** –գ. **Արհեստագետ**, техник, technician.
***Տենդենցիոզ*** – ած. **Միտումնավոր, Ձգտումնավոր,** тенденциозный, tendentious.
***Տեռոր*** – գ. **Ահաբեկչություն**, террор, terror.
***Տեռորիստ*** – գ. **Ահաբեկիչ**, террорист, terrorist.
***Տեռորիստական*** – ած. **Ահաբեկչական**, террористический, terroristic.
***Տերմին*** – գ. **Գիտաբառ, Եզր, Եզրույթ,** термин, term.
***Տերմինաբանական*** – ած. **Եզրաբանական**, терминологический, terminological.
***Տերմինաբանություն*** – գ. **Եզրաբանություն**, терминология, terminology.

***Տոն*** – գ. Երաժշտական ձայնանիշի ցույց տված ձայնի բարձրությունը՝ **Ձայնաստիճան,** тон, tone.
***Տոնոմետր*** – գ. *(տեխն.)* Արյան ճնշումը չափող գործիք, **Արենաչափ, Ճնշագիր**, тонометр, tonometer.
***Տոպոգրաֆիա*** – գ. **Տեղագիր, Երկրագիր**, топография, topography.
***Տրագիկոմեդիա*** – գ. **Ողբերգակատակերգություն, Եղերազավեշտ, Եղերակատակ,** трагикомедия, tragicomedy.
***Տրախոմա*** – գ. *(ախտ.)* Աչքի վարակիչ հիվանդություն՝ **Խշրուկ,** трахома, trachoma.
***Տրամպլին*** – գ. *(մարզ.)* **Ոստնակ, մեկնալաստ,** трамплин, springboard.
***Տրամվայ*** – գ. **Էլեկտրաքարշ, Հանրակառք**, трамвай, tram.
***Տրանզիտ*** – գ. **Տարանցում,** транзит, transit.
***Տրավմատոլոգ*** – գ. *(բժշկ.)* **Ոսկրաբույժ, Վնասվածքաբան, Բեկաբույժ**, травматолог, traumatologist.
***Տրավմատոլոգիա*** – գ. *(բժշկ.)* **Վնասվածքաբանություն, Բեկաբուժություն**, травматология, trauma.
***Տուռնիկետ*** – գ. *(տեխն.)* Շարժական անցարգել՝ **Դառնակ**, турникет, turnstile.

***Տուռնիր*** – գ. *(մարզ.)* **Մրցաշար**, турнир, tournament.

***Տուրիստ*** – գ. Հանգստի, նոր վայրեր տեսնելու կամ իր երկրի տարբեր շրջաններին ծանոթանալու համար ճանապարհորդող՝ **Զբոսաշրջիկ, Աշխարհաշրջիկ**, турист, tourist.

***Տուրիզմ*** – գ. Զբոսնելով շրջելը իբրև մարզանք՝ **Զբոսաշրջություն**, туризм, tourism.

## Ց

***Ցեզուրա*** – գ. Բանաստեղծական տողի ամեն մի հատվածը, որ ավարտվում է շեշտակիր վանկով՝ **Հատած**, цезура, caesura.

***Ցիկլոն*** – գ. **Պտտահողմ, Կիկլոն**, циклон, cyclone.

## ՈՒ

***Ուիք-էնդ*** – գ. Շաբաթվա վերջին՝ հանգստյան օրերը՝ շաբաթ և կիրակի՝ **Շաբաթավերջ**, уик-энд, weekend.

***Ունիվերսալ*** –ած. **Համապիտանի,** универсальный, universal.
***Ուտիլիտարիզմ*** – գ. **Օգտապաշտություն,** утилитаризм, utilitarianism.

## Փ

***Փախլավա*** – գ. Խմորի բարակ թերթերից պատրաստված թխվածք՝ **Թերթանուշ,** пахлава, baklava.

## Ք

***Քիմիա*** – գ., **Բնալուծություն, Տարրաբանություն,** химия, chemistry.
***Քիմիկոս*** – գ. **Տարրաբան, Բնալույծ,** химик, chemist.
***Քամելեոն*** – գ. *(կենդ.)* Նրբալեզուների ցեղին պատկանող մողես՝ **Գետնառյուծ,** хамелеон, chameleon.
***Քրոմոսոմ*** – գ.*(կենս.)* Ժառանգական հատկանիշները կրող մասնիկներ՝ **Մասնատարր, Սերնդակետ,** хромосома, chromosomes.

***Քրոնիկոն*** – գ. Հակիրճ տեղեկություն օրվա լուրերի շուրջ՝ **Մանրալուր**, хроника, chronicle.

# O

***Օբյեկտիվ*** – ած. 1. **Անկողմնակալ, Անաչառ, 2. Առարկայական,** объективный, objective.
***Օնլայն*** – մ. Համակարգչի՝ ցանցին միշտ միացած լինելը, **Առցանց,** онлайн, online.
***Օպերա*** – գ. **Երգախաղ**, опера, opera.
***Օսցիլոգրաֆ*** – գ. (*տեխն.*) **Տատանագրիչ,** осциллограф, oscilloscope.
***Օրանգուտան*** – գ. Խոշոր կապիկ՝ **Անտառամարդ,** орангутан, орангутанг, orangutan.
***Օրգանական*** – գ. **Գործարանավոր**, органический, organic.
***Օրգանիզմ*** – գ. **Գործարանավորություն**, организм, organism.
***Օրթոպեդ*** – գ. *(բժշկ.)* **Մարմնուղղակ**, ортопед, orthopaedist.

***Օրիենտացիա*** – գ. Քաղաքական ուղղություն՝ **Կողմնորոշում, Արևելում**, ориентация, orientation.

## Ֆ

***Ֆակտուրա*** – գ. **Ապրանքագիր, Բեռնագիր, Վաճառագիր**, фактура, invoice.

***Ֆեդերալ*** – ած. **Միութենական, Դաշնային**, федеральный, союзный, union.

***Ֆեդերացիա*** – Պետությունների միավորում միևնույն կազմում՝ **Դաշնություն**, федерация, federation.

***Ֆեոդալ*** – գ. Ինքնիշխան **Հողատեր, Ավատապետ**, феодал, feudal lord.

***Ֆեոդալիզմ*** – գ. **Ավատապետություն,** феодальный, feudal.

***Ֆերմա*** – գ., **Ագարակ, Հանդ,** ферма, farm.

***Ֆերմեր*** – գ. **Ագարակապան, Ագարակատեր**, фермер, farmer.

***Ֆիբրին*** – գ. *(ախտ.)* **Նյարդիտ,** фибрин, fibrin

***Ֆիզիոլոգ*** – գ. 1. Բնական երևույթներ քննող, 2. Զգայող էակների հատկանիշները ուսումնասիրող՝ **Բնախոս,** физиолог, physiologist.

***Ֆիզիոլոգիա*** – գ. 1. Գիտաճյուղ, որն ուսումնասիրում է կենդանական և բուսական աշխարհի կյանքը և գործունեությունը: 2. Զգայող էակների մասին գրված ուսումնասիրություն՝ **Բնախոսություն**, физиология, physiology.

***Ֆիզիոնոմիստ*** – գ. Դիմագծերով մարդու բնավորությունը որոշող՝ **Դիմագետ**, физиономист, physiognomist.

***Ֆիլեր*** – գ. *(տեխն.)* **Թելահան**, филер, tracker.

***Ֆիլտր*** – գ. Ծակոտկեն քար, որ զտում է հոսող հեղուկները՝ **Զտիչ, Մզաքար,** фильтр, filter.

***Ֆինալ*** – *(մարզ.)* գ. **Եզրափակիչ** խաղ, **Ավարտական, Մրցավարտ,** финал, final.

***Ֆինիշ*** – *(մարզ.)* գ. **Վերջնագիծ**, финиш, finish.

***Ֆիտոպաթոլոգիա*** – գ. Բույսերի հիվանդությունները ուսումնասիրող գիտություն՝ **Բուսախտաբանություն**, фитопатология, phytopathology.

***Ֆլեշ*** – գ. Տեղեկության էլեկտրոնային կրիչ՝ **Երթուղիչ**, флеш, flash.

***Ֆոլգա*** – գ. Ոսկու, արծաթի, ալյումինի բարակ թիթեղ՝ **Զառել**, фольга, foil.

***Ֆոնդ*** – գ. **Հիմնադրամ,** фонд, fund.

***Ֆոտոմետր*** – գ. Լույսի ուժը չափող գործիք՝ **Լուսաչափ**, фотометр, photometer.

***Ֆոտոմետրիա*** – գ. Լույսի ուժը չափելու գործողություն՝ **Լուսաչափություն,** фотометрия, photometry.

***Ֆոտոլիտոգրաֆիա*** – գ. Վիմագրական տպագրության եղանակ՝ **Լուսավիմագրություն,** фотолитография, photolithography.

***Ֆորզաց*** – գ. Գրքի առաջաթերթ՝ **Պահպանակ,** форзац, flyleaf.

***Ֆունիկուլյոր*** – գ. **Ճոպանուղի**, **Շղթայակառք**, фуникулёр, funicular.

***Ֆուտուրիստ*** – գ. **Ապագայապաշտ**, футурист, futurist.

***Ֆուտուրիզմ*** – գ. **Ապագայապաշտություն**, футуризм, futurism.

***Ֆուրգոն*** – գ. Բեռնատար ավտոմեքենա, **Բեռնա-կառք**, фургон, van.

***Ֆուրունկուլ*** – գ.*(ախտ.)* Մաշկի թարախոտ ու-ռուցք, **Թարախապալար, Պզուկ, Մկնոռ,** фурун-кул, furuncle.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան..........3
Համառոտագրությունների ցանկ..........7
Ա..........9
Բ..........15
Գ..........18
Դ..........21
Է..........25
Ժ..........29
Ի..........29
Լ..........33
Խ..........34
Կ..........35
Հ..........41
Մ..........44
Յ..........48
Ն..........49
Շ..........50
Պ..........51

Ռ..........................................................................57
Ս..........................................................................59
Վ..........................................................................67
Տ..........................................................................67
Ց..........................................................................70
ՈՒ........................................................................70
Փ..........................................................................71
Ք..........................................................................71
Օ..........................................................................72
Ֆ..........................................................................73

Ռ.Կ. Սաքապետոյան

# ԲԱՌԳՐՔՈՒՅԿ

*Նոր և նորակազմ բառեր հայերենում*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Ստեփանյանի
Տեխ. սրբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 70x90 1/32: Տպ. մամուլ 2,5:
Տպաքանակը՝ 400 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2014